ՀԵՐՄԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆ
HERMINE MESROPYAN

Մ. ՊՐՈՒՍՏԻ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ «ԸՆԴԴԵՄ ՍԵՆՏ-ԲՅՈՎԻ» ՎԵՊ-ԷՍՍԵՈՒՄ

Անվանի Ֆրանսիացի մոդեռնիստ գրող Մարսել Պրուստի (1871-1922թթ.) ստեղծագործության մեջ առանցքային տեղ են գրավում նրա գրական-գեղագիտական և փիլիսոփայական սկզբունքները, որոնք իրենց վառ արտահայտությունն են գտել հեղինակի գլուխգործոց՝ "Կորուսյալ ժամանակի որոնումներում" վիպաշարի մեջ: Սակայն մինչ այդ մոնումենտալ գործը գրելը, Պրուստը արդեն գրական աշխարհին ներկայացրել էր իր գրական-գեղագիտական հայեցակարգը մի շարք տեսական-գեղարվեստական գործերում, որոնից աչքի են ընկնում "Զվարճանքներ և օրեր"-ը, "Ժան Սանտեյ"-ը և "Ընդդեմ Սենտ-Բյուվի":

"Զվարճանքներ և օրեր" գիրքը՝ էտյուդների և "դիմանկարների" ժողովածու է, ուր ի հայտ են գալիս ապագա վիպասանի տաղանդի բնորոշ գծերը: դետալների դիպուկ ու նուրբ նկարագրումը, հոգեբանական խորաթափանցությունը: Ակնհայտ է առանձնահատուկ մոտեցումը բնության և շրջապատող աշխարհի հանդեպ: Միայնակության մոտիվը և մարդկային գոյի անբովանդակ լինելու զգացումը կարմիր թելով անցնում է ամբողջ գրքի միջով: Գրքի վերնագիրը հուշում է համեմատությունը Հեսիոդեսի հայտնի "Աշխատանք և օրեր" ստեղծագործության հետ: Սակայն Պրուստը ոչ թե համադրում, այլ հակադրում է երկու այս գործերը: Եթե Հեսիոդեսը առաջ է քաշում ապրելու, աշխատելու, գործելու հրամայականը, ապա Պրուստը փոխարենը առաջնային է համարում երազելը, երազներով ապրելը՝ հեռու մնալով կենսական պրագմատիզմից և մատնվելով անգործության: Սրանք այն գաղափարներն են, որոնք ավելի ուշ ծավալուն և առանցքային տեղ կգրավեն նրա "Կորուսյալ ժամանակի որոնումներում" վիպաշարում:

Մինչև XX դարի 50-ական թվականները գրականագետները բաժանում էին Պրուստի ստեղծագործությունը երկու շրջանի՝ վաղ (որի մեջ մտնում էին "Զվարճանքներ և օրեր" ժողովածուն, էսսեներ, ակնարկներ) և հասուն շրջան ("Կորուսյալ ժամանակի որոնումներում" վիպաշարը): Սակայն երբ 1952 թվականին Պրուստի կրտսեր եղբոր՝ Ռոբերտ Պրուստի (1873-1935) ժառանգները՝ ուսումնասիրելով իրենց մոտ պահվող արխիվը, հայտնաբերեցին և հրապա-

ռակեցին սկզբից "Ժան Սանտեյ" վեպ-հուշագրությունը, իսկ երկու տարի անց՝ "Ընդդեմ Սենտ-Բյովի" վեպ-էսսեն, մասնագետները ստիպված էին խոստովանել, որ դա եղել է առանձին շրջան Պրուստի ստեղծագործական կյանքում՝ մի յուրօրինակ կապող օղակ վաղ ու հասուն շրջանների միջև:

"Ժան Սանտեյ" հուշավեպը անավարտ ստեղծագործություն է, այդուհանդերձ այն ներկայացնում է մեծ արժեք գրողի աշխարհայացքային և գեղարվեստա-փիլիսոփայական դիրքորոշումը լիարժեք կերպով ընկալելու համար:

Եթե "Ժան Սանտեյ"-ը առաջին լուրջ փորձն էր, որը ճանապարհ էր հարթում դեպի "Կորուսյալ ժամանակի որոնումներում" վիպաշարը, ապա "Ընդդեմ Սենտ-Բյովի" վեպ-էսսեում բացահայտվում է Պրուստի մոտ արդեն իսկ ձևավորված այն գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգը, որն ընկած է նրա գլուխգործոցի հիմքում:

«Ընդդեմ Սենտ-Բյովի» գիրքը գրելու մտահղացումը Պրուստի մոտ ծնվեց դեռևս 1905 թվականին: Բուն ստեղծագործության վրա գրողը սկսեց աշխատել 1907 թվականից: «Ընդդեմ Սենտ-Բյովի» գրքին զուգահեռ 1908-1909 թվականներին գրողը աշխատում էր «Նմանակումներ ու խառնուրդներ» գրքի վրա, որը հրապարակվեց 1919 թվականին: Այս գործում Մարսել Պրուստը նմանակում է Բալզակի, Գոնկուրների, Միշլեի, Ֆլոբերի, Սենտ-Բյովի, Անրի դե Ռենյեի ու այլոց ոճը: Սա այն առաջին լուրջ աշխատանքն էր, որով Պրուստը ներկայացավ որպես գրական քննադատ: Միաժամանակ «Նմանակումներ ու խառնուրդներ» գրքի շարունակությունը, տրամաբանական արդյունքը դարձավ «Ընդդեմ Սենտ-Բյովի» գիրքը. Դեռևս «Խառնուրդներում» վերը նշված ժողովածուի երկրորդ մասում տեղ գտած հոդվածներում ու էսսեներում, Պրուստը ներկայացնում է իր գեղագիտական հայեցակարգի առանձին դրույթները, որոնք միավորված կուռ տեսքով ներկայանում են «Ընդդեմ Սենտ-Բյովի» գրքում: Մասնավորապես դրանցից մեկում՝ «Ճաշակի մասին» էսսեում, Պրուստը փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչ է գրականությունը և ինչով է գրավում գիրքը ընթերցողին: Ըստ Պրուստի, կարդալով այս կամ այն գիրքը, ընթերցողը մտորելով դրա շուրջ, ուզում է հասկանալ, թե ինչով է այն իրեն դուր եկել. միայն այն պատճառով, որ ստեղծագործությունը մոդայի՞կ է, թե՞ որովհետև դրանում հեղինակը նոր խոսք է ասում, նոր մտքեր է արտահայտում: Այս հարցերի պատասխանների որոնումները ընթերցողին «նետում են» գրքից գիրք: «Սակայն, գալիս է օրը, - գրում է Պրուստը, - երբ նրանք կարծես ծեռք են բերում իրենց սրբազան հանգրվանը, ...նրանց այս խաղաղ եզերքը բերեց Ֆլոբերը կամ Լեկոնտ դե Լիլը, և գեղեցկությունը, որը բացվեց նրանց առջև, այնքան ակնհայտ է, նրա ակունքները այնքան պարզ են, որ այս անգամ արդեն հավատալով իրենց բերած գեղեցկությանը, նրանք երկար զմայլվում են դրանով.

Բայց հետո նրանց տիրում է կասկածանքը, որը, հավանաբար, առաջանում է խամրած հիշողությամբ իրական գեղեցկության մասին, որը նրանք հանարավոր է, որ դիտահայել են ավելի վաղ քան նրանց հոգին մարմին է ծեռք բերել...»:[1]

Զարգացնելով այս միտքը, Մարսել Պրուստը գալիս է այն հետևության, որ իրական գեղեցկությունը անհատ-արվեստագետին տրվում է ոչ թե արտաքին աշխարհից, այլ իր սեփական ներաշխարհից: Սա այն գեղեցկությունն է, որը մարդկությունը կուտակել է հազարամյակների ընթացքում, գեների օգնությամբ փոխանցել է սերնդից-սերունդ: Համաձայն Պրուստի, միայն ընտրյալներին է տրված զգալ այս աներևույթ ու անշոշափելի գեղեցկությունը և փորձել շրջապատող աշխարհում, բնության մեջ փնտրել ու գտնել հավասարազորը այն գեղեցկության, որի էտալոնը պահվում է մարդկային ներաշխարհում, հոգում: Ելնելով սրանից, բոլոր իրական արվեստագետները, ըստ Պրուստի, «անհանգիստ հոգիներ են», հոգիներ,«ովքեր ծարավ են ինչ-որ բանի, ինչով, հնարավոր է, որ օժտում է միայն երկինքը և, որը այստեղ երկրի վրա, մարդը ստանում է պարտքով, որոշակի ժամանակով, միմիայն շնորհիվ պարզունակ անմիջականության»:[2]

Վերը բերված Պրուստի մեկնաբանությունը մի փոքրիկ, բայց և կարևոր մասնիկն է այն գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգի, որն իր զարգացումն է ապրում գրողի «Ընդդեմ Սենտ-Բյուվի», իսկ ավելի ուշ՝ «Կորուսյալ ժամանակի որոնումներում» գործերում: Հայեցակարգ, որը ծնունդ է առնում Բերգսոնի փիլիսոփայությունից, և գեղարվեստական վերջնական ձևավորում ստանում Պրուստի ստեղծագործության մեջ:

«Ընդդեմ Սենտ-Բյուվի» գործում Մարսել Պրուստը հեռակա կարգով բանավիճում է XIX դարի հայտնի ֆրանսիացի քննադատ Սենտ-Բյուվի (1804-1869) հետ, որը գրականագիտության պատմության մեջ հայտնի է, որպես կենսագրական մեթոդի հիմնադիր: Համաձայն այս մեթոդի, հեղինակի անձի, նրա «սովորությունների», նրա «զրույցների», նամակների մանրակրկիտ ուսումնասիրությունը կարևորագույն դեր է խաղում նրա հոգեբանական պատկերը ստեղծելու, ինչպես նաև նրա ստեղծագործությունների բուն էության բացահայտման գործընթացում: Պրուստը կտրականապես մերժում էր Սենտ-Բյուվի «կենսագրական մեթոդը», ինչն էլ դրդեց նրան այս առիթով հոդված գրել: Բայց՝ գրողի համար աննկատ, հոդվածը գնալով ընդարձակվեց, ծյուղավորվեց

---

[1] Л.В.Дудова, Н.П.Михальская, В.П.Трыков, Модернизм в зарубежной литературе, М., Наука 2000, стр. 164

[2] Л.В.Дудова, Н.П.Михальская, В.П.Трыков, Модернизм в зарубежной литературе, М., Наука 2000, стр. 164

ու վերացվեց հսկայածավալ գրքի: Մարսել Պրուստը գտնում էր, որ Սենտ-Բյովի մեթոդը մակերեսային է, քանի որ «գիրքը արդյունքն է մեկ այլ «եսի», և նման չէ գրողի առաջին «եսին», որը բացահայտվում է նրա սովորություններում, հասարակության հետ շփումներում, արատներում և այլն»: Սենտ-Բյովը, ըստ Պրուստի, «չէր տարբերում գեղարվեստական գործունեության առանձնահատկությունը, երբ առանձնության մեջ... մենք մեզ դնում ենք երես առ երես մեր հետ և ձգտում ենք լսել, փոխանցել մեր սրտի իրական ձայնը, չէր հասկանում, որ գրողի «եսը» բացահայտվում է միայն նրա գրքերում, այլ ոչ թե բարձրաշխարհիկ մարդկանց հետ զրույցներում...»:[3]

Գրքում Պրուստը համոզնունք է հայտնում, որ Սենտ-Բյովը «առավել բարձր արդյունքի է հասել ոչ թե որպես քննադատ, այլ որպես բանաստեղծ: Որպես քննադատ նա, կամա թե ակամա, ստիպված է ստել, նրա... մտքի մշտական սուտը կապված էր արտահայտչական արհեստական ճարպկության հետ.դադարելով խոսել արձակով, նա դադարում է ստել»:[4]

Նկատենք, սակայն, որ «Ընդդեմ Սենտ-Բյովի» գրքում Մարսել Պրուստի համար կարևորն ու առաջնահերթը ոչ թե այս գրականագետին քննադատելն է, նրա մեթոդը մերժելը, այլ՝ այս մերժմանը զուգահեռ, սեփական գրական - գեղարվեստական և գեղագիտական հայեցակարգը ներկայացնելը: Հենց սրանում է «Ընդդեմ Սենտ-Բյովի» ստեղծագործությունը գրելիս Պրուստի կողմից իր առջև դրած գլխավոր խնդիրն ու նպատակը և հենց սրանով է այս գիրքը արժևորվում գրողի գրական ժառանգության մեջ:

Հեղինակը համոզված է, որ Սենտ-Բյովը, իր կենսագրական մեթոդով տարված, մեթոդ, որը ենթադրում էր գրողի մեջ մարդու ու Արարչի անբաժանությունը, ակնհայտորեն թերագնահատեց իր ժամանակակից մեծ գրողներին:

Ավելի ուշ Պրուստը Սենտ-Բյովի հետ բանավեճը տեղափոխում է «Կորուսյալ ժամանակի որոնումներում» ստեղծագործություն. Սվանի, Բերգոտի, Վենտեյլի, մարկիզ դը Վիլպարիզի կերպարների վրա: Հրաժարվելով կերպարների կենսագրությունները կարևորելու սկզբունքից, Պրուստը փորձում է բացահայտել անհատի, կյանքի, սիրո, ժամանակի էությունը, անհատ-հասարակություն փոխհարաբերությունները. կյանքը՝ որպես բարձրագույն արժեք «ես»-ի համար; արվեստը որպես բարձրագույն արժեք, երբ շեշտը դրվում է ոչ թե վեպերում ընթացող իրադարձությունների, այլ հերոսների կողմից դրանց ընկալման վրա:

---

[3] Proust Marcel. Contre Sainte-Beuve, «Bibliothegue de la Pleiade», Paris, 1971, p. 44-45 (892 p.)

[4] Նույն տեղում, էջ. 103

Ըստ Պրուստի, ստեղծագործելիս այս մեթոդով է առաջնորդվել գրող ու բանաստեղծ Ժերար դը Ներվալը (1808-1855), որը նախ և առաջ ձգտում էր ճանաչել ինքն իրեն, տեսնել ու լուսաբանել սեփական մղումները, ներթափանցել իր հոգու խորքերը, հասկանալու, բացահայտելու համար այնտեղ ծպտված անտեսանելի տպավորությունները. «Նա հնարավորություն գտավ ընդամենը պատկերել ու կտավին փոխանցել իր սեփական երազանքի գույները», - գրում է Պրուստը:[5] Գրողը հղում է կատարում նաև Շարլ Բոդլերի (1821-1867) «XIX դարի ամենամեծ բանաստեղծի» վրա, որը, «ինչպես և Ժերարը, խաղում էր քամու հետ, խոսում ամպի հետ»:[6]

Եթե անգլիացի արվեստաբան ու գրող Ջոն Ռյոսկինը Մարսել Պրուստի համար մեծություն էր միայն որոշակի ժամանակահատվածում, երբ նա վերաթարգմանում էր Ռյոսկինի աշխատանքները, ապա Օնորե դը Բալզակով Պրուստը տարված էր ողջ կյանքում: Ինչպես Պրուստի տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործություններում, այնպես էլ նամակներում, Բալզակի անունը պարբերաբար հիշատակվում է, որպես հսկայական, գերիշխող մեծություն: Այսուհանդերձ Բալզակը Պրուստի համար «անծեռնամխելի» էտալոն չէր նա և հիանում էր այս մեծ դասականով և քննադատում: «Ժան Սանտեյ» վեպի ներածական մասում Մարսել Պրուստը գրում է. «Բալզակը... դա հզորություն է, բայց թե այդ հզորությունը փոքր ինչ նյութական է. նա դուր է գալիս շատ մարդկանց և երբեք նա այդքան դուր չի գա արվեստագետներին: Բայց դուք գիտեք, որ այնուամենայնիվ նրան շատ են սիրում...»:[7]

Եթե Լև Տոլստոյին արվեստագետները սիրում են, ըստ Պրուստի, գիտակցելով, որ նա առավել մեծ գրող է, քան իրենք, ապա Բալզակը սկզբում նրանց վանում է իր «գռեհկություններով» և միայն ավելի ուշ գրավում է բոլորին, ովքեր նրան ընդունում են այնպես ինչպես կա, «սիրում են քնքշության հետ համատեղ թեթև հեգնանքով»: Մարսել Պրուստը Բալզակին պաշտպանում է Սենտ-Բյովից, խոսում գրողի «հանճարեղ բացահայտումների» մասին, այն մասին, որ ֆրանսիական դասականը չէր ձգտում փոխանցել աշխարհի ու կերպարների պարզունակ պատկերները, այլ հենվում էր պատկերման «մեծ գաղափարի» (peinture) վրա:[8]

«Ընդդեմ Սենտ-Բյովի» վեպում Պրուստը փորձում է, մասնավորապես, պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է ստեղծագործական գործունեությունը այն անձի համար, ով ստեղծագործում է, և թե ի՞նչ կարող է քաղել քննադատը

---

[5] Նույն տեղում, էջ 170
[6] Նույն տեղում, էջ 171
[7] Proust Marcel. Jean Santeuil («Bibliothegue de la Pleiade»), Paris, 1971, p. 26
[8] Proust Marcel. Contre Sainte-Beuve, «Bibliothegue de la Pleiade», Paris, 1971, p. 337

վեպի կամ պոեմի տեքստից, ի՞նչ պատկերացում կարող է ստանալ հեղինակի ու նրա կյանքի մասին: «Այն բառի տակ, ինչը սովորաբար անվանում են խելք, - գրում է Պրուստը, - փիլիսոփաները ձգտում են տեսնել ինչ-որ մի բարձրագույն գիտակցություն, որը միասնական է ու անսահման, ինչպես զգացմունքը... Նրանք փնտրում են իրերի խորհրդավոր ու խորքային զգացմունքները»:[9]

Պրուստի մոտ գիտակցությունը նույնանում է որոշակի զգացմունքի հետ: Ըստ գրողի, միաժամանակ, յուրաքանչյուր ստեղծագործություն դա մի յուրահատուկ, այլաբանական «տաճար է» (նման տաճար է Պրուստը դիտում նաև իր «Կորուսյալ ժամանակի որոնումներում» վիպաշարը), որն ինքն իր մեջ ծնում է պատմություն: Հաշվի առնելով այս հանգամանքը, ըստ Պրուստի, բարձրակարգ գրողները հասկացել են, որ ստեղծագործությունը դա այն է, ինչը չի նկարագրում ոչինչ, ինչը դուրս է իրենից, քանի որ հակառակ դեպքում, Պրուստի խոսքերով, այն դառնում է իրական կյանքի պարզունակ «կրկնօրինակը»:[10]

Ելնելով այդ դրույթներից, Պրուստը փորձում է այնուամենայնիվ ցույց տալ իր ստեղծագործական հայեցակարգի սկզբունքային տարբերությունը բալզակյանից. անհատի հոգեբանությունը Բալզակի մոտ անխզելիորեն կապված է նրա հասարակական դիրքի, "քաղաքացիական կարգավիճակի" հետ, մինչդեռ Պրուստի համար սոցիալականը բոլորովին խորթ է և նրա հերոսների աշխարհը դուրս է սոցիալական իրատեսության սահմաններից: Առաջնային և գլխավոր տեղը այստեղ զբաղեցնում է հուշ-ասոցիացիան, հուշ-զուգորդումը, որն ուղղակի կերպով կապված է ենթագիտակցականի հետ: Այս հիմնական սկզբունքը, որն "Ընդդեմ Սենտ-Բյուվի" վեպ-էսսեում առաջ է քաշում Պրուստը, "Կորուսյալ ժամանակի որոնումներում" վիպաշարում կդառնա առանցքային, ինչպես նաև հեղինակի ամբողջ ստեղծագործության ամենաբնորոշ և հատկանշական գիծը:

The manifestation of Marcel Proust's literary – esthetical views in the novel-essay "Against Sainte-Beuve"

The famous French novelist Marcel Proust (1871-1922) is one of the greatest European modernist writers of the first half of XX century. The central place in the works of M.Proust take his literary-aesthetic and philosophical principles.

The culmination of these principles is to find in his main work - "In Search of Lost Time". But before creating this monumental work Marcel Proust expressed his important, principal theses in the early literary and theoretical works. The most important of these works is the novel-essay "Against Sainte - Beuve". The aim of this article is to analyse all the conceptual ideas of Marcel Proust , which are concentrated here, as well as author's parallel comparisons between classical novelists such as Flaubert, Tolstoy, Balzac.

---

[9] Նույն տեղում, էջ 355
[10] Նույն տեղում, էջ 640